# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<12>> հունիս 2015 N 52

ք. Եղեգնաձոր

**<<ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ <<ԱՂԱՎՆԱՁՈՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի, 65-րդ հոդվածի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի թիվ 41-Ա որոշումը

*Որոշում եմ*

1. Հաստատել <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> փակ բաժնետիրական ընկերության գույքի և գույքային իրավունքների՝ <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը՝ համաձայն հավելված 1-ի, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին վերաբերվող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ:
2. Հաստատել <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի տնօրենին համարել <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրեն:
4. Հանձնարարել <<Աղավնաձորի ԱԱՊԿ>> ՊՈԱԿ-ի տնօրենին մեկամսյա ժամկետում ընկերության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ